

Թեամբ կը զբաղէր ի Դրաղարկ, ուր կը գրէր Սաղէմի 24 Աւետարանը: Գուցէ այս Թորոսը Տարօնացիի հետ նոյնացնելու տեղ նոյնացնելու ենք Թորոս Թափրոնցիի կամ Հռոմկլայեցիի հետ:

Դարձեալ ինձի անծանօթ է Թորոսէ յիշատակ 1311ին ի Գլաճոր ինչպէս որ Հ. Ակինեան կը յիշէ, որ սակայն իր կարգին կը մոռնայ 1314-էն Մխիթար Երզնկացիի ձեռագրին ծաղկումը Թորոս Տարօնեցիէն: 1317 եւ 1321էն ինձի այլ ծանօթ են Թորոս Տարօնեցւոյ գործերը ի Գլաճոր. որոնց մասին արդէն խօսեցանք: Հ. Ակինեան մոռցած է յիշել 1323, 1325, 1328, 1330, 1332 թուականէն Թորոս Տարօնեցիի գործերը Ապահունիք եւ եւ Գլաճոր սակայն կը յիշէ 1346-էն հատ մը դարձեալ Գլաճոր: Թորոս Տարօնեցիի իրապէս կենաց եւ գործունէութեան խիստ երկար շրջան մը տալու ենք, 1284-էն 1346 արտադրող 62 տարիներու պատկանելի անջրպետ մը եւ գոնէ՝ իննսուներեքայ կենաց ընթացք մը:

* * *
* * *